ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 նոյեմբերի 2024 թվականի N 1753 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 489-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից՝ հաշվառման տվյալների փոփոխությամբ տրանսպորտային միջոցների վերասարքավորման և առանց թույլտվության վերասարքավորված տրանսպորտային միջոցների վերահաշվառման թույլտվություն տալու կարգերը, ինչպես նաև տրանսպորտային միջոցի վերասարքավորման թույլտվություն տալու, տրանսպորտային միջոցի վերասարքավորման թույլտվություն տալը մերժելու, վերասարքավորված տրանսպորտային միջոցի վերահաշվառման թույլտվություն տալու, վերասարքավորված տրանսպորտային միջոցի վերահաշվառման թույլտվություն տալը մերժելու մասին որոշումների ձևերը, վերասարքավորման ժամանակ իրականացման ենթակա տեխնիկական պայմանները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 2-ի N 909-Ն որոշումն ուժը կորցրած

ճանաչելու մասին» N 489-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, 1-ին կետի 1-ին ենթակետում, N 1 հավելվածի վերնագրում «ոստիկանության» բառը փոխարինել «ներքին գործերի նախարարության» բառերով.

2) որոշման NN 1 և 2 հավելվածների 1-ին կետերում «ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ ճանապարհային ոստիկանություն) ստորաբաժանումներում» բառերը փոխարինել «ներքին գործերի նախարարությունում (այսուհետ՝ նախարարություն)» բառերով.

3) որոշման NN 1 և 2 հավելվածների 2-րդ և 6-րդ կետերում և N 3 հավելվածի NN 1 և 3 ձևերի 2-րդ կետերում «ճանապարհային ոստիկանություն» բառերն իրենց համապատասխան հոլովաձևերով փոխարինել «նախարարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով.

4) որոշման N 3 հավելվածի NN 1, 2, 3 և 4 ձևերի վերնագրերում «Հայաստանի Հանրապետության ոստիկանություն «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն» բառերով.

5) որոշման N 3 հավելվածի NN 1, 2, 3 և 4 ձևերի վերջին պարբերություններում «Պետ» բառից հետո «,» կետադրական նշանը փոխարինել «՝» կետադրական նշանով, իսկ «ոստիկանության _____ » բառերը հանել:
կոչումը

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

07.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ